



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
L - 419



34.
L-48

ՀՐ ՊԱՌԱԼԻՎԵՐԻՄ ԱՆԱՄԱՐՔԻ ԽՄԲԱԳՐԱՆՔԵԱՆ

ՓԻՒԼ ԼԵՄԵՏՔ



ԹՈՒԹԻՒՆ

ԿԵ

Թարգմ.

ՕԲ. ՆՈՒԱՐԻ ԸՆԴԵՆԵՑՆԵՑ

Պ.

Թ. Ի Ֆ Լ. Ի Ս

Առաջատարի Ա. Ջութաթելամէնի Նիկ. 21

1904

02.05.2013
ՏԵՂՄԱՆԻ

6165

Առաջնային գործադրության մասին պահանջման մասին

188111.1111

ՀԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 17-го Октября
1903 г.

Գ Թ Ա Ռ Ի Թ Ի Ի Ն

ՀԵՂԻԱԹ ԺԻՆԻԼԼՈՒ Ե ՏՐԻ



աղդադի ծերունի իշխան
Տուրբիրին շատ գիտուն
էր, շատ հարուստ և հոչա-
կուած էր իւր իմաստու-
թեամբ:

Իւր ապարանքում, ուր
մարմարն ու թանկագին
մետաղները իրանց քանդակներով հա-
մապատճանում էին ծաղիկներին ու
ըոլսերին,

Իր պարտէզներում, ուր ծաղիկներն ու
ըոլսերն իրանց վառ գոյներով մըցում էին
մետաղների և թանկագին քարերի փայլի հետ,
նա պահում էր գեղեցիկ կանալք, որոն-
ցից նորա միակ պահանջն այն էր, որ միշտ

գեղեցիկ և զարդարուած լինեն, իսկ փոխառէնը ներում էր նոցա գործած յիմարութիւնները.

Նա պահում էր բանաստեղծներ միայն նորա համար, որ ոտանաւորներ ու պօէմաներ գրեն ոգեսորուած րոպէին և չէր բարկանում նոցա վրայ, երբ ոտանաւորները անլաշող էին դուրս գալիս.

Նա պահում էր փիլիսոփաներ նորա համար միայն, որ վիճեն իր հետ աստուածութեան, հնութեան և աշխարհի ծագման մասին և զիջողաբար էր վարւում նոցա հետ, երբ աւել պակաս էին խօսում:

—

Գարնանալին մի առաւօտ Տուրբիրին զբօսնում էր Բաղդագի գլխաւոր փողոցներից մէջում:

Մանրավաճառների սալակները բեռնաւորուած էին նարինջներով և ծաղկէ փունջերով. փողոցի սպիտակ լատակի վրայ երեսում էին մարդկանց կարմիր, կապուտ և կանաչ զգեստներ. շինութիւնների պատերից կախուած էին մոնոլիտի ճիւղերը և աւազաններում ջուրը սովորականից աւելի զուարթ էր խօսում:

Եւ ամեն մի նորատի կին նմանքում էր ծաղկի, որը թեթև կերպով ծածկուած է լի-

նում ցողով:

Տուրբիրին զգում էր, թէ ինչպէս իր ծեր սիրաց մեղմանում է այն բուլմունքների, գոյների և ընդհանուր ցնծութեան ազգեցութիւնից. Նա զուարձութեամբ մտաբերում էր անցեալը, իսկ ներկայում այնպիսի բան չէր գտնում, որից կարելի լինէր գանգատուել և պատրաստ էր վճռելու որ կեանքը հրաշալի է:

— Որհնեալ ջերմութիւն, հրաշալի արև...
ասաց նա գլեթէ լսելի ձայնով:

—

Նրան հանդիպեց հինգ տարեկան փոքրիկ, գեղեցիկ, վարդագոյն գէմքով մի աղջիկ, խարտեաշ մազերով և պարզ զգեստով: Երեխան մատը բերանում դրած, լուրջ նայում էր նրան իւր գեղեցիկ և բամբակի պէս փափուկ գանգուրների միջից. Ծուում էր որ նրա վրայ մեծ ազգեցութիւն էին արել Տուրբիրին մեծ միրուքը կամ այն խորհրդաւոր կենդանիները, որոնք նկարուած էին նրա քղամիդի վրայ:

Երեխան այնքան գեղեցիկ և հրապուրիչ էր, որ Տուրբիրին մօտեցաւ նրան, համբուրեց և երկու ոսկի դրեց նրա ձեռքը:

Յետու պատահեց մի տասը տարեկան տղա-

Ա. Նրա դէմքը տգեղ էր, մինչև քթի սուր ծալրը
պէտէնով ծածկուած և պղտոր աչքերով:

Նա ողորմութիւն խնդրելով՝ պատմում
էր որ իր մայրը հիւանդ է, որ եօթը փոք-
րիկ եղբալըներ ունի և որ երեք օր է ոչինչ
չի կել։ Բայց այնպէս էր ասում, կարծես
թէ անգիր էր արել բոլոր խօսքերը։
Տուրբիրին յոնքերը կիտելով՝ մի ոսկե-
տուեց նորան։

Քսան քայլ հեռու տեսաւ մի աղքատ.
Կոացած ծեր մարդ էր նա, կեղտոտ ցըն-
ցոտիներով և խղճալի դէմքով։ միբուքը
մոխրագուն էր, իսկ առանց բիբերի կարմիր
աչքերը նմանւում էին շատ հասած պտուղ-
ների ճեղքուածքներին։

Սուր, շշնչացող ձախով նա կամաց և
անգիտակցաբար կրկնում էր միկնուն բառերը։
— Ողորմեցէք իսեղճին, որ անկարող է
աշխատել. ամենակարող Որմիզդը կվարձատ-
ըէ ձեզ։

Երբ նա արտասանում էր ալդ խօսքերը՝
բերանից գինու հոտ էր գալիս։

Տուրբիրին հեռուից մեկնեց նրան ար-
ծաթէ մի գրամ և որովհետեւ վայր ընկաւ,
ծերը մեծ գժուարութեամբ կոացաւ որ փո-
ղը վեցնի։

Մի քանի ըոպէից յետոյ Տուրբիրին հան-
դիպեց մի կնոջ. չէր կարելի որոշել ծեր էր
նա թէ երիտասարդ. ձեռքին բռնած ունէր
մի երեխայ, որի գլուխը ծածկուած էր քո-
սով. համեստութեամբ կախելով իւր գլուխը
աշնալէս, որ Տուրբիրին չէր կարող տեսնել
նորա աչքերը, նա հետեւում էր իշխանին և
ցածր ձայնով ողորմութիւն խնդրում։

Աւելի ձանձրոյթից, քան թէ անսրտու-
թիւնից, Տուրբիրին արագացրեց իր քալլերը.
բայց աղքատ կինը շարունակում էր ողորմու-
թիւն խնդրել և չէր հեռանում նորանից.
Տուրբիրին քսակը հանեց և մի քանի պղնձէ
գրամ շպրտեց նրան։

Սյդ միջոցին մի քանի քալլ հեռու նկատեց
պատին յենուած մի մարդ, առանց ձեռքի
և ոտների. ուժեղ և կեղծ ձախով նա երգում
էր Ֆիրդուսիի սիրային երգերից մէկը, որի մէջ
նկարագրում է ծաղիկների և թռչունների
փալը. մի սարսափելի տեսարան էր այդ։

Տուրբիրին կանգնեց և օգտուելով այն
բանից, որ այդ մարդը չէր կարող իրեն հե-
տևել, անցաւ փողոցի միւս կողմը առանց
ուշադրութիւն գարձնելու նրա վրայ։

Փոքը ժամանակ ևս զբօսնեց նա, բայց
էլ չէր զգում կեանքի գեղեցկութիւնը,

— Ինչպէս անտանելի շոգ է, ասաց և
վերադարձաւ իւր ամրոցը։
Քիչ մտածելուց յետոյ, Տուրբիրին կան-
չեց իւր կառավարչին և ասաց. — գնա մեծ
փողոցը. այնտեղ կտեսնես մի ծեր աղքատ և
կտաս նրան մի ոսկի. յետոյ մի կի՞ն՝ ծծկեր
երեխան գրկին, նրան կտաս երկու ոսկի. մի
քիչ հեռու կզանես մի մարդ, առանց ձեռքի
և ոտների, նրան կտաս երեք ոսկի։

Սուր օրից, ամեն անգամ երբ Տուրբիրին
դուրս էր գալիս մանգալու, մի ծառայ գը-
նում էր նրա առաջից և ողորմութիւն բա.
Ժանում բոլոր աղքատներին, հրամայելով որ
իսկոյն հեռանան և չերեան իւր տիրոջը։
Տուրբիրին աւելի ողորմած և բարեսիրտ
դարձաւ. կարելի էր կարծել, որ նա ուզում
էր Բաղդադում ոչնչացնել աղքատութիւնը։
Ամեն օր ողորմութիւն և կերակուր էին տա-
լիս խեղճերին, հիմնեց ապաստանարաններ
եռեխաների, ծերերի, մալրերի, հիւանդների
ու հաշմանդամների համար։

Եւ երբ ասում էին նրան, թէ մէկը
սուտ աղքատ կամ հիւանդ է ձեանում որ
խարէութեամբ փող ձեռք բերի, նա պա-
տասխանում էր.

— Հանգիստ թողէք ինձ. ես ժամանակ

չունիմ սուտը և ճիշտը Համեմատելու և
ճշմարտութիւնը պարզելու։
Այսպիսով Տուրբիրին, ուրիշների վիճա-
կը թեթևացնելու համար, ծախսեց իր ամ-
բողջ կարողութեան իննը տափերորդական մա-
սր. մինչւ անգամ կրծատեց իւր սեպհական
անձի համար հարկաւոր ծախսերը և թողեց
իր մօտ միայն ամենաերիտասարդ կանանց,
ամենածոյլ բանաստեղծներին և Համոզուած
փիլիսոփաներին։

Բայց շարունակում էր զուարճանալ կեան-
քով, շրջապատուած գիտութեան, արուեստի
և մարդկային խելքի արդիւնքներով։

Նա երբէք չէր մտնում իր կառուցած
ապաստանարանները և ոչ էլ պալատի այն
սենեակները, որտեղ ողորմութիւն և ճաշ
էին բաժանում աղքատներին։

Մի անգամ, երբ Տուրբիրին զբօսնում
էր քաղաքում, աղքատները շրջապատեցին
նրան և սկսեցին աղազակել, որ պարտական
են նրան իրենց կեանքով, իսկ շատերը ծունդ
չողած համբուրում էին նրա զգեստները։

Բայց իշխանը բարկացաւ նոցա վրայ,
կարծես թէ ժողովրդի շնորհակալութեան

բուռն զգացմունքը անախորժ էր թւռում նրան։
Ժողովուրդը վճռեց որ նա ամենաարժանա-
ւոր և սուրբ մարդն է ամբողջ Պարսկաստա-
նում։

Երբ Տուրբիրին զգաց, որ իւր մահը մօ-
տեցել է, հեռացրեց բոլոր փիլիսոփաներին
ու բանաստեղծներին, թողեց իր մօտ մի-
ալն մի տասնուեօթը տարեկան գեղեցիկ
աղջիկ, ինդրելով որ նա ոչինչ չխօսէ, այլ
միայն նայէ նորան իւր պարզ և գեղեցիկ
աչքերով։

Եւ նա մեւաւ։

Նորա դագաղի ետևից գնում էին Բաղ-
դադի նախկին աղքատները և նոցանից շա-
տերը ողբում էին։

— Տուրբիրի հոգին ներկայացաւ Ումեղ-
գին դատուելու համար։

Ումեղը հարցրեց նրան։

— Ի՞նչ ես արել աշխարհում. ի՞նչ ես
շինել։

Տուրբիրին, չկասկածելով թէ ինչ եր սպա-
սում իրան, համեստութեամբ և անկեղծու-
թեամբ տաց։

— Իհարկէ, ես թոյլ էի ինչպէս և ա-
մեն մի մահկանացու. զուարձանում էի գե-

ղեցիկ գծերով, նկարներով, հնչիւններով և
բառերի խաղերով. բայց իմ ծախսով կառուցել
եմ չորս ապաստանարան, տուել եմ աղքատնե-
րին կարողութեանս իննը տասներորդական
մասը։

— Ճշմարիտ է, չար մարդ չես եղել գու-
և լաճախ բարի գործեր ես կատարել, բայց
այս անգամ չեմ ընդունի քեզ իմ արքայու-
թիւնը, քո հոգին պէտք է դարձեալ երկրա-
յին կեանք վարէ մի ուրիշ մարդու մէջ, որ-
պէսզի հասկանաս և մեղքերդ քաւես։

— Բայց որ մեղքս պէտք է քաւեմ, Տէր։

— Մտածիր և լաւ ճանաչիր քեզ։ Ի՞նչ
էիր մտածում այն ժամանակ երբ փողերդ
բաժանում էիր աղքատներին. ի՞նչ էիր զգում
հոգուդ մէջ այն օրը, երբ պատահեցիր ծեր
աղքատին, դժգոյն կնկան և առանց ձեռքի
ու ոտների մարդուն։

— Անսահման կարեկցութիւն դէպի մարդ-
կանց դժբաղութիւնները. — պատասխանեց
Տուրբիրին։

— Սուտ ես խօսում, ասաց Ումեղը։
Այդ հանդիպումը քեզ համար անախորժ բան
էր. նա շատ կոպիտ կերպով լիշեցնում էր
քեզ որ երկրիս վրայ կայ տառապանք և աղ-
քատութիւն. բացի դորանից, դու բարկանում

Էիր նրանց վրայ որովհետեւ նրանք վիրաւորում
էին քեզ իրանց տգեղութեամբ և աղտոտու-
թեամբ։ Այս աստիճան ատում էիր այդ անբաղդ-
ներին, որ մի անգամ չկարողացար անգամ տա-
նել նրանց շնորհակալութիւնները, որովհետեւ
նրանց ուրախութեան կոպիտ արտայայտու-
թիւնը գրգռում էր քեզ, քո ճաշակի նրբու-
թիւնը արգելեց նրանց արտայալտել իրանց
երախտագիտութիւնը գէպի քեզ և ցոյց տար
որ նրանք էլ ընդունակ են գնահատելու քո
բարեգործութիւնները։

Աշխատում էիր ոչնչացնել աղքատութիւ-
նը, որովհետեւ նա տգեղացնում և անուա-
նաբանքը է կեանքը։ Բայց ես, որ թափան-
ցում եմ ամեն մի հոգու մէջ և բոլորը տես-
նում, ասում եմ քեզ, որ քո կարեկցութեան
մէջ մեծ ատելութիւն ու յուզմունք կալ։

— Բայց ես ատում էի ոչ թէ իրանց՝ աղ-
քատներին, այլ տանչանքը, չարը, քո մշտա-
կան թշնամի Արհմնին։

— Արհմնը ես եմ։

— Դու, իմ ստեղծողը։

— Ես Արհմն եմ և միենոյն ժամանակ
էլ Որմիզդ։ Բարին ծագում է չարից ինչպէս
նաև բարեգործութիւնը բղխում է տանջանք-
ները։

Ներից։
— Տէր, միթէ չէիր կարող աւելի լաւ
բան մտածել։

— Կատակ մի անի. չարութիւնը կանցնի.
Նա գորութիւն ունի միտին նրա համար, որ-
պէս զի վերականգնէ առաքինութիւնը և ե-
րանութիւնը։

— Համաձայն եմ դորան, ասաց Տուբրի-
բին, — բայց ի՞նչ կապ կալ այդ բոլորի և իմ
մէջ։ Ի՞նչպիսի զգացմունքներ կարող էին ա-
ռաջացնել իմ մէջ այդ սողուն աբարածները,
երանց զգուելի դէմքով։ բացի նրանց տան-
ջանքը թեթևացնելուց, ուրիշ ի՞նչ կարող էի
անել նրանց համար։

— Հենց դորա համար է որ ուղարկում
եմ քեզ երկրիս վրայ որ լաւ հասկանաս այդ։
— Բայց Տէր...

Տուբրիբին չվերջացրեց... չքացան թէ Որ-
միզդը և թէ Տուբրիբին... տիւեց քաօս։

—
Տիրիբուի կեանքից աւելի տխուր և աղ-
քատ կեանք չէր կարող լինել։ Նա ծնուեց
իսկիւբում, բանուորի խեղճ խրճիթի մէջ։ նո-
րա երեխայութիւնը անցաւ շատ տխուր, մեծ
մասամբ քաղցած։ սովոր եց մի արհեստ, որով
հազիւ էր կարողանում ապրել։ Ունենալով

այն բոլոր առաքինութիւնները՝ որ առհասարակ ունենում են աղքատները. նա չունէր ոչ գոռոզութիւն և ոչ նրբազգածութիւն։
Որպէսզի մենակ չմնայ, նա պսակուեց։
Նորա կինը և երկու երեխաները չքառութիւնից մեռան. մի անգամ Տիրիրուն վայր ընկաւ ծառից և ջարդուեց. այնպէս անփութութեամբ էին բժշկում նրան, որ ոտները բօլորովին թուլացան, մէկ ձեռքի կաթուած ստացաւ, իսկ միւսի վրայ անբուժելի վէրք դուրս եկաւ։

Ստիպուած սկսեց սղորմութիւն խնդրել. սկզբում շատ քիչ էր աշխատում, որովհետև ամօթը խանգարում էր նրան ձանձրացնել անցորդներին. յետոյ հաշտուեց իր դրութեան հետ. այդ ժամանակից ստանում էր ճիշտ այնքան, ինչքան հարկաւոր էր քաղցից շքեռնելու համար, և որովհետև նա ոչ մի միաթարութիւն չունէր աշխարհիս վրայ, հենց որ մի քանի կոպէկ էր մնում, սկսում էր խմել։

—
Տիրիրուից ոչ հեռու ապրում էր մի շատ աղքատ աղջիկ, որը խղճալով՝ ամեն առաւօտ գալիս էր նրա մօտ, մաքրում էր վէրքերը, կարգի բերում տնկողինը, կարկատում շորե-

րը, արգանակը եփում և այդ բոլորի համար ոչինչ չէր պահանջում։

Նրա անունը Կրիկա էր. թէպէտ գեղեցիկ չէր, բայց այնչափ բարութիւն էր փայտում նրա աչքերում, որ ամենքը հաճութեամբ նայում էին նրան։

Եւ ամեն առաւօտ Տիրիրուն անհամբերութեամբ սպասում էր այն բոպէին, երբ Կրիկան պէտք է գար իր մօտ։

Մի անգամ Տիրիրուն ըստ սովորականին ողորմութիւն էր խնդրում. մի հարուստ մարդ զգուանքով տուեց նրան մի ոսկի։

Այդ վայրկեանին Որմիզդը ստիպեց Տիրիրուի հոգուն զգալ իր մէջ Տուրբերի հոգին. Տիրիրուն, տեսնելով թէ ինչպիսի արհամարհանքով էր հարուստ մարդը ողորմութիւն տալիս, հասկացաւ թէ ինչու համար էր Որմիզդը դատապարտել իրան։ Հասկացաւ որ ինքն էլ անցեալ կեանքում օգնելով աղքատներին, արհամարհում էր նրանց խոնարհութեան և կեղտոտութեան համար։

Միւս առաւօտ, երբ Կրիկան եկաւ կապելու նրա վէրքերը, Տիրիրուն տեսաւ որ նա անում է այն առանց զգուանքի և որ նրա աչքերը պահպանում էին իրանց հան-

գիստ և հեզ արտայալտութիւնը.

Եւ հասկացաւ, որ այդ նորատի աղջիկը, որ չէր խորշում և խնամում էր նրան, չնայելով որ ինքը ուրիշ աղքատներից աւելի էր զգուանք ներշնչում, իրօք սուրբ և բարի հոգի էր:

Երբ աղջիկը վերջացրեց վէրքերը լուանաւ, Տիբերուն համբուրեց նրա ձեռքը և լաց եղաւ:

Որմիզդը խղճաց և իրաւունք տուեց նըրան նոյն գիշերը հանգիստ մեռնելու:

—Ի՞նչ հասկացար, հարցըց Որմիզդը Տուրբիրի—Տիբերուի հոգուն:

—Ահա ինչ. պէտք է ծառայել աղքատներին ինչպէս մեզ հաւասարի. պէտք է մըտնել աղքատների հոգու մէջ, որպէսզի չարհամարհենք նրանց այն ստորութեան և հոգեկան աղքատութեան համար, ինչ գրութեան մէջ մենք ինքներս կլինինք, եթէ մեզ էլ միւնոյն գժբաղդութիւնը պատահի, պէտք է սիրել նրանց, գէթ միայն խոնարհութեան համար. պէտք է սիրել ալդ գժբաղդներին, որոնց թիւը շատ է և որոնք լարդի պէս կարող են սըբել բոլոր հարուստներին երկը վրալից, պէտք է աշխատել գտնել նրանց:

մէջ վեհանձնութեան և արժանաւորութեան գոնէ հետքը. պէտք է ուրիշի գժբաղդութիւններին էլ վերաբերուել նոյնպիսի համբերութեամբ, ինչպէս և մեր սեպհական ձախորդութիւններին:

Օգնելով նրանց, չպէտք է վրդովուել աղքատութեան և վշտի դէմ, այլ պէտք է նայել նրանց վրայ ինչպէս նորա խորհրդաւոր գործիքի, Որը միայն գիտէ բոլորի պատճառը, որովհետեւ բարձրեալի գլխաւոր նպատակն է ոչ թէ արտաքին գեղեցկութիւնը ստեղծել, այլ բարութիւն:

—Ճիշտ ես ասում, ասաց Որմիզդը—ծառայ բարի, մտիր քո տիրոջ ուրախութիւնը:

1804
36354



թագի ուղարմանեց և մասի անհետութիւնը ունի
առջևուկի վեցաւ և զարդ զգաւծ թշ
հաւ ասկունու թաղաղացի ու ազգաւունեցի
ու ամբողքու զեւ և սերպի ու արծունի ու այլն
անունու ու անունու անունու անունու անունու
և զարդի իւ անունու անունու անունու անունու
անունու անունու անունու անունու անունու անունու
անունու անունու անունու անունու անունու անունու անունու



օր. Նուարդ Աղանեանցի թարգմանութիւն-
ները.

- | | |
|----------------------------------|------|
| 1. ԱԿ Հացեր. բ. տպ. | 5 կ. |
| 2. Ապուշը. մ. Էսպարբի | 5 կ. |
| 3. Դթութիւն մ. Լըմետրի | 5 կ. |
| 4. Աւելեղի նորագումը. ֆ. Դիկմէլի | 5 կ. |

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ

վաճառութեամ է «Լումարժի խմբագրատանը»



6165